



VIVA^{CELL} MTS

TUESDAY
JULY 11, 2017

DAY 3

DAILY օրվա օրեր



MASTER OF MELANCHOLY

ՄԵԼԱՆՆՈԼԻԱՅԻ ԿԱՐՊԵՏԸ

■ ԿՐԱԿԻ ՄԻՋՈՎ
■ ՀԱՐԳԱՆԵԻ ՏՈՒՐԸ.
ՈՈՒԲԵՆ ԳԵԿՈՐԳՅԱՆՑ

էջ 3

■ ԱՍՏՎԱԾՈՒՅԻՆԵՐԻ
ԵՎ ԿԱՆԱՆՑ ՄԱՍԻՆ
■ ԿՐԹՎԵԼՈՒ ԿԻՆՈՈՐԴԵՐՁ

էջ 4

ՀՅՈՒ ՀԱԴՄՈՆ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ էջ/p. 5 INTERVIEW

HUGH HUDSON

■ OF GODDESSES AND WOMEN
■ BOYS WILL BE BOYS
■ A PLEA FOR EDUCATION

p. 6

■ THROUGH HELL AND FIRE
■ TRIBUTE TO RUBEN
GREVORGYANTS

p. 7

ՄՈՍԿՎԱ ԿԻՆՈԹԱՏՐՈՆ, ԿԱՊՈՒՅՏ ԴԱՎԼԻԾ
MOSCOW CINEMA, BLUE HALL

11.07

Table with 4 columns: Time, Title, Director, Language/Length, Subtitle, and other details. Includes titles like 'Sexy Durga', 'Sarajevo Songs of Woe', 'A Day in the Life of a Clown', etc.

ՄՈՍԿՎԱ ԿԻՆՈԹԱՏՐՈՆ, ԿԱՐՄԻՐ ԴԱՎԼԻԾ
MOSCOW CINEMA, RED HALL

Table with 4 columns: Time, Title, Director, Language/Length, Subtitle, and other details. Includes titles like 'Murat', 'Salt and Bread', 'The Line', etc.



ՄՈՍԿՎԱ ԿԻՆՈԹԱՏՐՈՆ, ՓՈՔՐ ԴԱՎԼԻԾ 1
MOSCOW CINEMA, SMALL HALL 1

Table with 4 columns: Time, Title, Director, Language/Length, Subtitle, and other details. Includes titles like 'Daniel', 'Mother Derdo and the Walnut Tree', 'A Cat From Havana', etc.



ՄԻՆԵՄԱ ՍԹԱՐ
CINEMA STAR

Table with 4 columns: Time, Title, Director, Language/Length, Subtitle, and other details. Includes titles like 'Bravo, Virtuosos!', 'The Square'.

ԿԻՆՈՊԱՐԿ
KINOPARK

Table with 4 columns: Time, Title, Director, Language/Length, Subtitle, and other details. Includes title 'The Other Side of Hope'.

ՇԵՐԻԿ ՄԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԿԻՆՈԴԵՐԱՍԱՆԻ ԹԱՏՐՈՆ
HENRIK MALYAN THEATRE OF CINEMA ARTISTS

Table with 4 columns: Time, Title, Director, Language/Length, Subtitle, and other details. Includes titles like 'The Book: Home', 'Crows of the Desert', etc.

ԵՐԵՎԱՆՅԱՆ ԳԻՇԵՐՆԵՐ ԴՈՂՈՍՅԱՆ ԱՅԳԻՆԵՐՈՒՄ
YEREVAN NIGHTS AT POGHOSYAN GARDENS

Table with 4 columns: Time, Title, Director, Language/Length, Subtitle, and other details. Includes titles like 'Jamila Afghani', 'Six Musicians and the City'.



ԵՐԵՎԱՆՅԱՆ ԳԻՇԵՐՆԵՐ ՕԴԵՐԱՅԻ ՀՐԱՊԱՐԱՎՈՒՄ
YEREVAN NIGHTS AT OPERA SQUARE

Table with 4 columns: Time, Title, Director, Language/Length, Subtitle, and other details. Includes titles like 'Dr Tom Catena', 'Khatabala'.

ԵՐԵՎԱՆՅԱՆ ԳԻՇԵՐՆԵՐ ԿԱՍԿԱԴՐՈՒՄ
YEREVAN NIGHTS AT CASCADE

Table with 4 columns: Time, Title, Director, Language/Length, Subtitle, and other details. Includes title 'A Cat From Havana'.

ԵՐԵՎԱՆՅԱՆ ԳԻՇԵՐՆԵՐ «ՀԱՅԱՍՏԱՆ» Կ/Թ ԱՅԳՈՒՄ
YEREVAN NIGHTS AT HAYASTAN CINEMA GARDEN

Table with 4 columns: Time, Title, Director, Language/Length, Subtitle, and other details. Includes title 'Voices of Light'.

ԵՐԵՎԱՆՅԱՆ ԳԻՇԵՐՆԵՐ ՆԱՆՍԵՆԻ ԱՅԳՈՒՄ
YEREVAN NIGHTS AT NANSEN GARDEN

Table with 4 columns: Time, Title, Director, Language/Length, Subtitle, and other details. Includes titles like 'Dr. Denis Mukwege', 'Arto'.

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
RUSSIAN-ARMENIAN UNIVERSITY

Table with 4 columns: Time, Title, Director, Language/Length, Subtitle, and other details. Includes title 'Bravo, Virtuosos!'.

GOLDEN APRICOT DAILY

Informational footer containing contact details for Golden Apricot Daily, including phone numbers, email addresses, and social media links.

ԶԵՍ ՈՒԶՈՒՄ՝ ՄԻ՛ ԱՐԱ

ՀԲԸՄ դահլիճում երեկ վարպետության դաս անցկացրեց ռուս ռեժիսոր Բորիս Խելբենիկովը: Վերջինիս կինոնկարներն արդեն բազմիցս ցուցադրվել են «Ոսկե ծիրանում» և հայտնվել են բազմաթիվ այլ միջազգային կինոփառատոների ուշադրության կենտրոնում՝ արժանանալով մրցանակների: Մասնավորապես նրա վերջին՝ «Անթրոփա» կինոնկարը ժանաչվել է ռուսական «Կինոտավր» փառատոնի լավագույն ֆիլմ, իսկ օրեր առաջ դերասան Ալեքսանդր Ցազենկոն այդ ֆիլմի համար պարգևատրվել է չեխական եռդինակավոր Կառլոսի Կարրի ՄԿՓ-ի մրցանակով: Այժմ ֆիլմը կարելի է դիտել «Երևանյան պրեմիերա» ծրագրի շրջանակներում:



դուր ծախսեցի: Երևու տարի հավաքում էի այդ գումարը: Իսկ այսօր ֆիլմ կարելի է անել գրոշներով»:

Խոսելով դերասանների հետ աշխատանքի մասին՝ Խելբենիկովը փաստեց, որ դերասանն, իրը, պետք է լավ լինի, բայց պետք է ամեն ինչով նման լինի այն կերպարին, որին մարմնավորելու է: Ըստ ռեժիսորի՝ այս դեպքում, իհարկե, ամեն ինչ հեշտ է ու հարմար, բայց որ երբ դերասանն իրեն ծանոթ մի բան է խաղում, ապա սկսում է իր կողմից անհավանական մանրություններ ավելացնել և տեստն ավելի հարուստ ձևով ներկայացնել: Այսինքն՝ դերասանը շատ լավ գիտի ինչ է անում, քանի որ այդ ամենն իր կյանքի մի մասն է: Ռեժիսորին մնում է պարզապես ուղղորդել նրան: Իսկ դերասանի՝ պրոֆեսիոնալ տեսանկյունից

լավ կամ վատ լինելը Խելբենիկովը հասկանում է փորձերի ժամանակ: Դեռին համապատասխան կան չիանապատասխանեց, ըստ նրա, ավելի հայտնի է դառնում, օրինակ, փորձերի ընթացքում ծխելու:

Ռեժիսորն անդրադարձավ նաև հեռուստատեսության առող որակին՝ մասնավորապես Նշելով, որ հեռուստատեսության լավագույն կարելի է նկատել արբանյակային ալիքներով: Մասնավորապես հեռուստատեսության ընթացքում Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի, Իսրայելի արբանյակային հեռուստատեսությանը: «Այնտեղ մեծ ազատություն կա, բոլոր հանրահայտ վարպետները փորձում են ինչ-որ փորձարարական բաներ անել: Այն դարձել է գլխավոր հարթակը...»,- շեշտեց Խելբենիկովը: **Ռ.Գ.**

ԳԵՎՈՐԳՅԱՆՑԻ ԹՈՂԱԾ ՀԵՏՔԸ

Կիրակնօրյա բացման արարողությունն սկսվեց մեկ ռոպե լույսով: Կարգավիճակը հարգելու համար հունիսի 23-ին վախճանված ռեժիսոր Ռուբեն Գևորգյանցի հիշատակը: Հարգանքի տուրքը կազմակերպելի այսօր՝ Գևորգյանցի՝ 1980-ին նկարահանած կարճամետրաժ «Բարի հետք» ֆիլմի հատուկ ցուցադրությամբ:



«Բարի հետք» ինքնին հուշերի մասին է: Կարճ վավերագրությունն 83-ամյա ինքնուրույն նկարիչ Ասատուր Ճերմակյանի մասին է, ով սովորականների պատերին բնապատկերներ էր նկարում՝ հավանաբար փորձելի հուշ պահելով այն բնությունից, որին փոխարինել էին այդ շինությունները՝ նույնիսկ, երբ ավտոտնակների տերերը հաճախ ջնջում էին նրա գեղեցիկ աշխատանքները:

Ռուբեն Գևորգյանը Հայաստանի ակնառու կինոգործիչներից էր: 1969-ին Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտն ավարտելուց ի վեր՝ Ոսկե ռեժիսորական ետանդում գործունեություն է ծավալել: 2004 թվականից մինչև իր մահը եղել է Հայաստանի կինեմատոգրաֆիստների միության նախագահը: Նաև դասավանդում էր Երևանի թատրոնի և կինոյի ինստիտուտում ու Հեռուստատեսության և ռադիոյի ազգային ակադեմիայի նախագահին էր: Նրա ժառանգությունն ընդգրկում է երկու գիրք և շուրջ 65 ֆիլմ, որոնցից շատերը միջազգային փառատոների մրցանակաբեկներ են:

Հարգանքի տուրքը Գևորգյանցին եկավ գումարվելու հայ երեք կինոգործիչների՝ այս տարի նշվող հորեկյանների առթիվ նախապես ծրագրավորված հարգանքի տուրքին՝ ռեժիսոր Յուրի Գոլոյանի (90), Յուրի Երզնկյանի (95) և օպերատոր Սերգի Բարսեղյանի (80): Կիրակի երեք գործիչներին պատվով հասողեր բացվեցին Ազնավուրի անվան արտադրության: Իսկ փառատոնի վաղվա ծրագիրը ներառում է նրանց մասին վավերագրական ֆիլմերի ցուցադրությունը: **ՅՔԸ**

«Բարի հետք», (Ռուբեն Գևորգյանց, Հայաստան, 1980), 20:00 - Մոսկվա կ/թ, Կապույտ դահլիճ

ԿՐԱԿԻ ԵՎ ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐԻ ՄԻԶՈՎ

Ինչպես միշտ, այս տարվա «Հայկական համայնապատկեր» մրցույթը բաժանված է երեք կատեգորիաների՝ խաղարկային, վավերագրական և կարճամետրաժ, որոնցից առաջինում ընդգրկված է 3 կինոնկար, ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան արտադրության:

Ամերիկահայ ռեժիսոր, սցենարիստ և դերասան Քրիս Ավելոյանը 2012-ին ներկայացրեց «Դոնալդը լաց եղավ» կարճամետրաժը, որի հիման վրա էլ 2016-ին ստեղծվեց համանուն լիամետրաժ ֆիլմը: Պատմությունը զուտ, լուրջ և մտազարդ Փիթերի (Ջեյմս Վեյքման) մասին է, ով 20-ամյա բացակայությունից հետո վերադառնում է մայրենի Բոյ Այլենդ (Ավելոյանի բնակավայր): Կորցնելով դրամապատկեր Փիթերը ստիպված թախում է իր հին ընկերոջ՝ Դոնալդի (Ավելոյան) դուռը: Պարզվում է, որ դպրոցն ավարտելուց հետո Դոնալդն ամենկն չի փոխվել, մինչ օրս վայելում է դեռահասության հանույնները՝ ծխում է մարիխուանա, խոսափում է ցանկացած պատասխանատվությունից և ապրում ծնողների տան ձեռնահասարակում, որի պատերը գեղեցկացնում են պոռոն աստղերի լուսանկարները: Փիթերը դառնում է կարոտագին հուշերի, գավելուայի իրավիճակների և մանկության այդպես էլ չմեծացած ընկերոջ գերին:

Չնայած ֆիլմի վերնագրին՝ Դոնալդն անընդ-

հատ ծիծաղում է և ուրախանում: Հակասակ նրան՝ Լեոն Միլնայանի «Բրավո, Վիքտոր» կիսահեթաբային, կիսասատիրակ և կիսաքրեական պատմության հերոս Այլիլը (Մամվել Թաղևադյան) ունի փխրուն սիրտ, որը շատ հեշտ է կուտրել: Նա երիտասարդ կարգապահ է, ով վաշտում է անվճար ինտելիգենտի համաչափ կյանքը, մինչ մի օր պատահաբար հանդիպում է Լարային (Մարիա Այնեոլայանովա), ով ներքաշում է Այլիլին քրեալիզարիսի կյանքի ետնաբեմ: Անճանաչ, մասնագիտական և ընտանեկան խնդիրները միավորվում են վերածվելով խճճված կոնկրետ, որտեղ հերոսները պետք է միասին անցնեն կրակի, ջրի և փամփոշուների միջով:

Փամփոշուներ են արձակվում նաև մրցույթի երրորդ ֆիլմում՝ ռեժիսոր Սիեր Մլրաչյանի «Կյանք ու կրիկ» ռազմական մեղրամայում, որն էլ դարձել է դերասան Մամվել Թաղևադյանի հայտնիության պատճառը: Ֆիլմում 90-ականների Երևանն ու Լաբարալն են: Պատմությունը կենտրոնանում է չորս երիտասարդների հավատարիմ ընկերության վրա: Սկսելով իրենց հասուն կյանքը նույն վայրում՝ երևաճակ կտորին, ֆիլմի երկրորդ մասում նրանք բաժանվում են և կանգնում բոլորովին տարբեր ուղիների վրա: Թաղևադյանի Տիգրան անունով կերպարը, հայրթախարելով ինքն իրեն, մեկնում է ճակատ ոչ միայն Արցախը պաշտպանելու, այլև ինքն իրեն գտնելու, ինչը, կարելի է ասել, միավորում է վերոհիշյալ ֆիլմերի բոլոր հերոսներին: **ՊԲ**

Սեր առ Երևան



«Վեց երաժիշտ քաղաքի ֆոնին» (Տադևոս Դանիլյանց, Ռուսաստան, 2016), Երևանյան պրեմիերա, 11.07՝ 21:00 - Պողոսյան այգիներ, 14.07՝ 19:00 - «Մոսկվա» կ/թ, Կարմիր դահլիճ, 21.00 - Նանսենի այգի, 15.07՝ 21:00 - «Հայաստան» կ/թ այգի

Այս ֆիլմը մոսկվաբնակ կինոլավերագրող, բաժնատեր և լուսանկարիչ Տադևոս Դանիլյանցի սիրտ արտաստանությունն է իր նախնիների երկրի երաժշտության և մայրաքաղաքի հանդեպ: Ռեժիսորը որոսեցել է Երևանի ամենից բնորոշ և դրական սրբամիջ մեկը՝ նրա երաժշտական նկարագիրը: Տարբեր սերունդների, զանազան ժանրերի և ոճերի վեց երաժիշտների դիմանկարների միջոցով կրկանվեց գեղարվեստ էլ 21-րդ դարի Հայաստանի մայրաքաղաքի երաժշտական մշակույթը, և ոչ միայն... Այստեղ կա ճարտարապետություն, պատմություն և մարդիկ, մարդիկ, մարդիկ՝ անցորդներ, ուղևոր, ճանաչելով անվանի երաժշտիկ, շտապում են լուսանկարելու նրա հետ, իսկ իր դրվագում Երևանում գրանդու դիլիջանցի աշակերտուհիները, տեսնելով Տոլչին, խմբով կատարում են նրա երգերից մեկը...

Ֆիլմում հիմնականում «զամուրային» Երևանն է նկարահանված ընթացող մեքենայից կամ թռչիչ բարձրությունից և անհետաքրքիր դիտանկյուններից, սակայն կան նաև քաղաքի մյուս, անճանաչ կողմերը, որոնք քաղաքի հայտնի խորհրդանշական վայրերի պես ոգեշնչում են երաժիշտներին: Ֆիլմն Գասպարյանը, Մալխաթ, Լիլիթ՝ Պիպոյանը, Ֆորշը և Արտուր Թուրքոյանցյանը խոսում են հետո և մտն անցյալից («մութ ու ցուրտ տարիների») մասին հուշերն ընդմիջում են արխիվային կադրերով, հիշում ուրախ-տխուր դեպքեր, փիլիսոփայուն քաղաքի ու այլ շատ բաների մասին: Մասնագիտական հետաքրքրություններից բացի՝ նրանց միավորում է մեկ բան՝ սերն ու Երևան, եթե անգամ այդ մասին չեն արտահայտվում: Եվ այս ամենը՝ երաժիշտների կատարումների ներքո: **ԱՔ**



«Կյանք ու կրիկ»

Ասոիկյան հոյս

«Հոյսից անդին» (Ալի Կարոյանյակի, Ֆինլանդիա/Գերմանիա, 2017), Երևանյան պրեմիերա, 11.07՝ 20:30 - «Կինոպարկ», 21.07՝ 20:00 - «Սինեմա Սթար», 14.07՝ 22:00 - «Մոսկվա» կ/թ, Կապույտ դահլիճ



«Կարոտախոտով տառապողներին առաջինն են հետ ուղարկում»: Այս գգոշացումն է ստանում սիրիացի փախստական Մալիդը մեկ այլ գաղթականացի, երբ Ֆինլանդիայի փախստականների մի կենտրոն է գալիս: Այնքան էլ խոստանալից սկիզբ չէ ֆիննական մեղադատության վարպետ Ալի Կարոյանյակիի ամենավերջին՝ անցյալ փետրվարին Բեռլինի ԿԳ-ում «Արձաթև արջ» մրցանակին արժանացած «Հոյսից անդին» ֆիլմի գլխավոր հերոսի համար:

Հայտարարվել էր, որ այս ֆիլմն ազատ կերպով իրար շաղկապված «նավահանգստային» եռապատմի» երկրորդ մասն է, որն սկսվել էր գաղթականացի

նորյան մասին լիաժողովի մի հեքիաթով՝ «Հալո» ֆիլմով: «Հոյսից անդին»-ը նմանատիպ ազդակի վրա է հիմնված. իրական կյանքում գաղթականության վերաբերյալ եղած հետադարձությունները փոխարեն ֆիլմը կյանքի երկարության փորձ-ինչ ավելի հուսադրող հրավեր է մատնում: Կարոյանյակիի աշխարհում որվածքն այն է, որ աշխատող ճնշված հասարակարգը (որը միշտ նրա ուշադրության կենտրոնում է) թիկունք է լինելու իր նորեկներին՝ ճրանցից երես դարձնելու փոխարեն:

Ֆիլմի գլխավոր հերոսները երկու տղամարդ են, ովքեր հրաժարվում են իրենց հայտնի ամեն ինչից, մեկը՝ անհրաժեշտաբար, մյուսը՝ իր կամքով: Իսա-

լիդը (Շերվան Հաջի), իր հարեցիքում խտաճիկով բռնությունից, այժմ ապաստան է խնդրում Ֆինլանդիայում: Նրա ուղին ի վերջո խաչվում է Վիկտորյայի (Կարոյանյակիի մշտական դերասան Սակարի Կուստանին) հետ: Վերջինս թողել է շրջիկ վաճառականի իր գործը, կնոջը և զուտ քնահանձնի համար գնել մի լաված ռեստորան՝ հազիվ թե ոգևորություն ցուցաբերող իր աշխատակազմով հանդերձ: Կարոյանյակիի եզակի կինոյի բոլոր ընդհանուր տարրերն առկա են՝ նկարի աշխատանքը, որը միաժամանակ պաշտոն է ու մեղմ, նվազագույն, չորացած արվեստագետների կատակերգությունը, չափազանց առոյի կերպարներն է «ամենապրկերտ» պոլիտեր կինոյի պատմության մեջ:

Ըստ Լույսյան «Հոյսից անդին»-ը բախումներով մասին է. բախում՝ Մալիդի իրական արտանմանի պատմությանն է Վիկտորյայի դեպքում՝ գրեթե ֆարս հիշեցնող կարագոցումների միջև: Բախում՝ Կարոյանյակիի կարոտաբարձության երանգ ունեցող աշխարհի և անզգա ու դաժան ժամանակակից կյանքի միջև, որում երբեմն-երբեմն բեկում է ստեղծ ունեցում: Այս ամենի ի հայտ է գալիս նորը մի բողոք՝ ընդդեմ այն փաստի, որ Կարոյանյակիի ձեռագրին բնորոշ հեքիաթային հույսն արդեն հարաձուռն կերպով ժամանակակից է թվում: ՑՔՀ

Տղան ռոպ է

«Դանիել» (Անաստայա Դոմբովսկայ, Լեհաստան, 2016), Վալերազրական մրցույթ, 11.07՝ 10:00, 14.07՝ 17:00 - «Մոսկվա» կինոթատրոն, Փոքր դահլիճ 1

Դանիելը գուցե ունի մտավոր շեղումներ, բայց Անաստայա Դոմբովսկայի կերտած դիմանկարից երևում է, որ նա միաժամանակ նաև սովորական դեռահաս է: Դառնի համայնությանը իր վաճառողների համար կազմակերպած ճամբարում Դանիելն ու նրա ընկերները գլխաճանձման են գրուցում առջիկների մասին: Ինչն էր գաղտնիքն էր պատմությանում այն հաջողի, ում ինքը հավանում է: Ո՛րն է սերն արտահանելու լավագույն ձևը: Եվ ինչ էն իրենք ակնկալում հարաբերություններից: Այս կարճ վավերագրական ֆիլմում Դոմբովսկայն այս գրուցները ներկայացնում է մանրակրկտորեն ընտրված կարդերով: Նա ասես պատին նստած ճանձն լինի, որը համայն տեսակցելի պահում է հեռավորության վրա ու երբեք չի միջանցում նրանց դատարարություններին: Արդյունքում ստացվել է հուզիչ ու նորը դիմանկար, որը մեծուրեն շեշտում է այն միտքը, որ տղան տղա է՝ անկախ ամեն ինչից: ՑՔՀ

Կյանքը՝ խավարում

«Ռեռացած կինը» (Լալ Դիաս, Ֆիլիպիններ, 2016), Երևանյան պրեմիերա, 11.07՝ 20:30 - Մոսկվա կ/թ, Կապույտ դահլիճ

«Ես, իրոք, խավարի եակ եմ»,- ինչ-որ պահի ասում է Ռեռացած կինը՝ Ֆիլմում: Չկատարած սպանության համար երեսուն տարվա բանտարկության դատապարտվելուց հետո ազատ արձակված կնոջ համար նորագյուտ ազատությունը չի վերականգնի հասարակության մեջ նրա ունեցած տեղը: Մինչև նա բանտում փակված է եղել, վախճանվել է նրա ամուսինը, իսկ որդին կորել է Մանիլայի փողոցներում: Մինչդեռ ինքը՝ Ռեռացած, ստիպված է սարկել ծայրայի

կարգավիճակում՝ իրեն բանտարկության մասնած մարդու վախից: Հարուստ ընտանիքում ծնված այդ մարդը (որ մի ժամանակ Ռեռացածի երկրպագուներից էր) ինքն իրեն սահմանափակում է շքեղ առանձնատան պատերի ներսում՝ վախճանված առևանգիների գոհ դատարար:

Ֆիլիպինցի ռեժիսոր Լալ Դիասի ֆիլմը, որ վարպետ տեմպով ու հիասքանչ կերպով է նկարահանված, փայլուն մտորում է ազատության բնույթի շուրջ մի հասարակությունում, որտեղ զենքով անհավասարություն է տիրում: Մենք ճանաչում ենք Ռեռացածին մի շարք կերպարների հետ նրա շփումների միջոցով, որոնք բոլորն էլ նույնքան լավ են համապատասխանում «խավարի եակ» բնորոշմանը, որքան է ինքը: Կա մի անուն կին, որ տառապում է անհանգստությունից,



փողոցային փողոցային մի վաճառող և տրանսերսուալ մի կին, որն, իր երկրից փախելով, հիմա փողոցային փողոցի է դարձել: Այնևայտուրեն սա կարճ ժամանակակիցությունում գոյատևելու ճանապարհն է, սակայն նույն չափով նաև դանդաղ ինքնապայմանություն: Այս մասին մի գիշեր խոստովանում է Ռեռացածը:

Դիասն այս պատմությունները շարադրում է շուրջ 4 ժամ (հարաբերակալորեն կարճ տևողություն մի ռեժիսորի համար, ում հայտնի է իր չափազանց երկար ֆիլմերով), և իսկապես արժեք թույլ տալ, որ ֆիլմն այդքան տեղի: Անորակալորեն փոխանակումների ընթացքում հայտնվող պարզ մարդկայնությունը գեղեցիկ կերպով հակադրվում է հերոսների սակավ, սակայն գործը ներքին արտահայտություն ունեցող տառապանքին: ՄԿ



Ասվածուհիների ու կանանց մասին

«Ցանկալի Դուրգան» (Սանալ Կումար Սասիդիարան, Յնդկաստան, 2017) Խաղարկային մրցույթ, 11.07՝ 10:00 - «Մոսկվա» կ/թ, Կապույտ դահլիճ, 19:30 - «Մոսկվա» կ/թ, Կարմիր դահլիճ

Հարավային Հնդկաստանի Կերալա նահանգում անցկացվող կրոնական տոնակատարությունն ու գիշերային տանջային ճամփորդությունը միասնապես են՝ կազմելով Ռոնեթրայի ՄԿԳ-ում «Tiger» մրցանակին արժանացած «Ցանկալի Դուրգան» համարակալորեն ֆիլմի որվազները: Հինդուիզմում Դուրգան պատերազմի սաստկանում էին, երկուստարդ տղամարդկանց պաշտամունքի տարական է. նրանք իրենց ակնածանքն արտահայտելու համար տար մուկի վրայով են բաշյում և իրենց մաշկը ծակում գամբղով ու կարթերով: Այն ցավը, որին նրանք իրենց ենթարկում են, հավասարապես վկայում է թե՛ մայր, թե՛ մազոկիտտ լինելու մասին: Վերջինն ունի նաև իր բացատրությունը, եթե նա կարող էր Դուրգանի պատկերները... ձեռքերի բազմաթիվ գույզներ, որոնցում մի շարք գեներներ կան, իսկ երբեմն էլ բազում ձեռքերից մեկում նա կարած գրվել է պատմում: Ո՛վ կուզի նրա հետ խաղ խաղալ...

Մականացուների աշխարհում Դուրգան անունով երկուստարդ մի կին իր ընկերոջ հետ գիշերով փորձում է փախել Բարի: Մակայն փորձության է ենթարկվում պատահական մեքենայով մինչև մոտակա գնացքի կայարան հասնելը: Կանայք չեն կարող գիշերով թափառել փողոցներով, մի սահմանափակում, որի շնորհիվ նրանց կարծեցյալ «օգնականները» գորություն են ստանում: Չույզի ունեցած բարոյություններին գումարվում է նաև այն, որ նրանք հուսահատված փորձում են ուշադրությունից զրկվել մայր, թանկ որ Բարիը մահանկալան է: Հանգստաբարտից այս պատմության մեջ սիրաբանները իմունականում հանդիպում են հնդկական հասարակության խառնուրդ հանդիսացող հասովածի՛ երկուստարդ ու տարբեր, աղքատ ու հարուստ, քաղաքացիական ու պետական ծառայողներ... Գիշերն ավելի է շեշտում այն անհասկալի իրավիճակը, որում գտնվում են սիրաբանները, և ստեղծվում է հրաշալի ֆուն այսօրվա Հնդկաստանի բարոյական վիճակի մտայ ընկունության համար:

Նկարահանումը սկսվելու ռեժիսոր Սանալ Կումար Սասիդիարան մտավոր պատկերացում ունի ապագա ֆիլմի մասին: Նա սիրում է առանց սցենարի աշխատել, և այս անգամ «Ցանկալի Դուրգան» նրա երկրորդ խաղարկային ֆիլմն է՝ նա նույնիսկ նախապես չի որոշակիացրել պատմումը: Այդ իմպրովիզացիոն բնույթը ֆիլմին անվանակատարակի մի երանգ է հաղորդում, և ի հայտ է բերում անհանգստություն մի գրուցում, որից ոճվար է չազդվել: ՄԿ

Սասանային հարթեք բարությանը

«Դերոյ մայրիկը և ընկուզենին» (Մերոյա Օնալ, Թուրքիա, 2017), Վալերազրական մրցույթ, 11.07՝ 10:00, 17:00 - «Մոսկվա» կ/թ, Փոքր դահլիճ 1

Դերոյ մայրիկը 70 տարեկան հայ կին է, ով իր երկնանքի ու թոռների հետ ապրում է Սուսուրում ու Բիթլիսում: Բիթլիսն իր ամբողջ պատմության ընթացքում եղել է հակամարտությունների օջախ: Հազարավոր հայեր են սպանվել ու արտաքսվել իրենց հողից ցեղասպանության ժամանակ: Դերոյն իր մաշկի վրա է զգացել այդ պատմական ողբերգության հետևանքները, ամուսնուն սպանել են, երբ Դերոյն դաշտում էր, իսկ նա նաև Բիթլիսում իրենց պատկանող հողակտորը:

Չնայած այս որբերգական իրադարձություններին Դերոյի պատմությունը կամրի ու համառության մասին է: Նրա ամբողջ ընտանիքին հարկադրել էին կրոնափոխ լինել ու մահադատվել դաժան, բայց նա հավատարիմ էր մնացել իր քրիստոնեական հավատքին: Երկնանքի հետ միասին աղքատության մեջ ապրելով Սուսուրում՝ նա կարողացել է պահպանել ու նույնիսկ վերադարձնել իր հողակտորի մի մասը: Հինա՝ երկու ամիս մեկ, նա վերադառնում է Բիթլիս՝ հավաքելու ընկուզեքներ իր հողատարածքում աճող միակ ծառից: Սա Դերոյի ղեկավարությունների հետ ընտանիքին հարկադրված մեղադրանքն է: Բիթլիս այցելությունները Դերոյի համար մտայ վերադարձնում են պարունակում, թանկն էր իրենց հողի իր ողբերգական անցյալը: Գուրի կարդերում երևում է գերեզմանոցը, ինչը ցույց է տալիս, որ մահն իր դերակատարումն է ունեցել Բիթլիսի պատմության մեջ:

Ամեն դեպքում «Դերոյ մայրիկը և ընկուզենին» թախտուր վավերագրական ֆիլմ չէ: Ռեժիսոր Օնալն ավելի շատ ցույց է տալիս Դերոյի ընտանիքի երջանիկ ու համերաշխ կյանքը, քան թախտուր ու մեղադրանքները: Նրա գլխավոր հերոսը նույնպես չի փորձում ավելի լավատես է, չնայած որ այդքան ժամանակ անցյալով է ապրել: Գուցե նրա վրա ազդում է պատին կախված օրացույցը, որտեղ գրված է. «Սասանային հարթեք բարությանը»: Այս կենտրոնալ վավերագրական ֆիլմն իր բարոյաբան ջանքերից հարկում է հասցնում ստատուսին: ՀԷ

Կրթվելու կինոնուլերն

«Արյուն և լուսին» (Տոմմազո Կոտրոնեի, Իտալիա/Շվեյց, 2017), Վալերազրական մրցույթ, 11.07՝ 12:30, 13.07՝ 17:00 - «Մոսկվա» կ/թ, Փոքր դահլիճ 1

Շվեյց աշխարհի այն երկու երկրներից մեկն է, որտեղ օրենսդրությունը չի սահմանում ամուսնության նվազագույն շեմը, ուստի և մանկատանակ աղջիկների ամուսնություններն առօրյա երևույթ են այդ երկրում: Նման լավ (և կամքին հակառակ) ամուսնության գոհ է «Արյուն և լուսին» վավերագրության հերոսուհին՝ Սարայան, որը, սակայն, ի տարբերություն հազարավոր նմանից աղջիկների, ընդդեմ է իր վիճակի՝ դե: Տոմմազո Կոտրոնեին այս ֆիլմի ամեն ինչն էլ սցենարիստը, ռեժիսորը, օպերատորը, հնչյունային ռեժիսորը, մոնտաժորը և պրոդյուսերը:

Սարինը շարունակ արդե՛րով տարբեր ամուսնուհետ, գրկված լինելով կրթվելու հնարավորությունից՝ քայքայված առողջությանը և անապահովությանը զգացնումով Սարայանի ի վերջո համարակալորեն է ունենում փախելու ստեղծագործական մի անձամուք գյուղում, որտեղ նրան ձեռք է մեկնում իրեն համայնի ու տգիտության դեմ պայքարի լաված երկուստարդ ուսուցիչ Մոհամադը: «Արյուն և լուսին»՝ ասես 20-րդ դարի կեսին «լաված» պատմական մտադրումը մատուցած Շվեյց պետության ֆիլմ-դիմանկարն է, որն էլ, ի լրումն ծայրահեղ աղքատության և հետամուսնացության, դարձնել է նաև իրավունքի անհավելիների թիրախներից մեկը: Ուրջ ֆիլմում շեշտվում է կրթության, ուսանելու կարևորությունը, դրա միջոցով արքայազանությունն ու տգիտությունը հարթահարելու գաղափարը («Կրթությունն ամեն ինչի կիսբը է», - ասում է Մոհամադը): Այլապես բոլորին կարող է ստատվել Մոհամադի ծնողների՝ ալ-Քալիլայի ստեղծագործական գոհերի ճակատագիրը:

Քաղաքական և սոցիալական տար շեշտադրումներով «Արյուն և լուսին» Շվեյց (և ոչ միայն) ժողովրդին ուղղված կրթական անգրագիտությունը, ինչպես քաղաքականացնել և հանրային կյանքի մեկնել, օգնելու միայնակ և համայն արական փոփոխությունները: Այլապես, ինչպես ֆիլմի հերոսն է ասում, ներկա պայմաններում աղքատ ավելի է աղքատանում, հարուստը՝ հարստանում: ՄԿ

Արդեն 50 տարի է, ինչ կինոյով եք զբաղվում...

...Եվ շատ ֆիլմեր չեն նկարել: Ինձ հաճախ են հարցնում՝ ինչու ես շատ ֆիլմեր չունեմ, ասես դա պարտադիր պայման է: Չեմ կարծում, թե դա նշանակություն ունի: Նախագիծ անելը հինգ տարի է տևում. երկու տարի պահանջվում է այն պատրաստելու համար, մեկ տարի՝ նկարահանման, երկու տարի էլ՝ գովազդելու համար: Ստիպված ես ընտրել ճիշտ նախագիծ, բայց երբեմն սխալվում եմ. կաշտում ես որևէ նախագիծի ու առաջ չես շարժվում: Ես հիմա երեք ֆիլմ եմ պատրաստում և չգիտեմ՝ դրանցից որևէ մեկը կիրականացվի, թե ոչ: Գուցե ընդամենը մեկը: Բացի այդ՝ ես մեծամտ եմ. այլևս չեմ ձգտում մեկ մյուսի հետևից ֆիլմեր նկարահանել: Երբեմն երկար ընդմիջում եմ վերցնում: Այդ ընթացքում վավերագրական ֆիլմերով եմ զբաղվում, ինչը շատ հետաքրքիր է ինձ համար. ավելի հանգիստ է: Այդ ֆիլմերը ծախսաշատ չեն, ու հետևաբար ճնշում էլ չկա: Վավերագրության դեպքում սկսում ես նկարահանել, ու ֆիլմն աչքիդ առաջ ձևավորվում է:

Շեճ պրոդյուսերների կողմից ճնշումը ձախողեց «Նեղափոխության» առաջին թողարկումը...

Սկզբնական սցենարով նախատեսված էր պատմողական արտակարգային խոսք, բայց ստույգում ստիպեց, որ ֆիլմը շատ թողարկվի, ու մենք այդ խոսքը ձայնագրելու ու ավելացնելու ժամանակ չունեցանք: Եվ, իհարկե, ֆիլմը դրանից արարախիլի տուժեց: Այդ ներքին մեծամտությունները հերոսի մասին ըստ էին բացահայտում, բայց ակնարկներով: Ի վերջո ձայնագրությունն արեցինք, ու այդ տարբերակը փոքր թվաքանակով թողարկվեց Անգլիայում (*հենց այս տարբերակն է ընդգրկվել փաստառնի ծրագրում - ՄԿ*), բայց ֆիլմի հեղինակությունը փրկել չստացվեց: Այժմ Պաչինոն այնտեղ փայլուն է, բայց ամերիկյան մամուլը նրան անարդար փնտռեց: Ինչե՛ն, ես արել էի այնպես, ինչպես ուզում էի, ու լավ ֆիլմ է ստացվել: Ես ուզում էի, որ այստեղ հենց այդ ձևով ցուցադրվեր: Երաժշտությունը հոյակապ է, նույնն էլ Բեռնար Լյուտիի օպերատորական աշխատանքը: Ես նրա հետ շատ էի աշխատում, մինչև նա գոհվեց օդանավի վթարից: Նա է շունչ տվել իմ ֆիլմերին:

Այժմ Պաչինոյի հերոսը «Նեղափոխության» մեջ շատ ինքնամոփոխ է: Ձեզ կարծես հերոսների այդ տեսակն է գրավում՝ մարդիկ, որոնց չի հաջողվում իրենց պատմությունը բարձրաձայնել, բայց, միևնույն է, առաջ են գնում:

Երանք լրիվ անմեղ են: «Նեղափոխությունը» մի մարդու մասին է, ով խրվել է մի պատերազմի մեջ, որի հետ ոչ մի առնչություն չի ուզում ունենալ: «Ալտամիրան» մի սիրողական հնագետի մասին է, ով մերժված է գիտական հնամայրի կողմից: Իսկ «Անվակաբերը»... անմեղ ուսանողներ են: Իշխանությունները փորձում են փոխել նրանց մտածելակերպը, բայց նրանք դիմադրում են: Ու նրանք հաղթում են: Սա այն է, ինչ մի անգամ նկատել ու նշել էր մի լրագրող՝ իմ ֆիլմերը հիմնականում անմեղ մարդկանց մասին են: Ես չգիտեմ՝ ինչու են նրանք այդպես հետաքրքրում ինձ: Այդ մարդիկ անընդհատ ճնշվում են իշխանությունների կողմից: Ես չգիտեմ՝ ամենը եմ, թե՛ ոչ, բայց բավականին դյուրահավատ եմ: Ոչ թե՛ հիմար, այլ հենց դյուրահավատ... Ու ինձ դուր են գալիս նման մարդիկ:

Ձեր ֆիլմերը հաճախ են անդրադառնում անցյալին: Ինչպես է Ձեզ հաջողվում այդ պատմություններն արդիականացնել:

Ես ինձ պատմական ֆիլմերի ռեժիսոր չեմ համարում, չնայած ֆիլմերիս մեծ մասն անցյալի մասին է: Բայց դա ինձ համար նշանակություն չունի. եթե պատմությունը լավ է, եթե այն ինձ գրավում է, ապա կարող է լինել ցանկացած դարաշրջանի մասին: «Անվակաբերը» ֆիլմում ժամանակակից երաժշտության գործածումն ինձ օգնեց ստեղծել կապը ֆիլմի ու ժամանակակից աշխարհի միջև: Այդ ժամանակավիճակի դեպքում շատ լավ որոշում էր, չնայած դա թերևս միակը չէր: Ես իրականում մեծ վերլուծում չեմ աշխատանքը, այնպես որ չգիտեմ, թե որիչ ինչեր են անում, որպեսզի այդ դարաշրջանները մոտենան մեր ժամանակակիցին:

Դուք սցենարներ չեք գրում: Ինչպես եք գտնում այն պատմությունները, որոնք հետո ֆիլմ եք դարձնում:

Դա հեշտ չէ: Երբ ինձ նախագիծ են առաջարկում, պետք է հավանամ՝ արդյոք կարող եմ այդ գաղափարը, այդ պատմությունն իմը դարձնել: «Ալտամիրան», օրինակ, պրոդյուսերի նախապայայտ պատմությունն էր. նա սիրողական հնագետ էր: Սա իմ պատմությունը չէր, բայց ես գտայի, թե որքան հետաքրքիր է այն: Դրա համար էլ ես երբեք չեմ ցանկացել լինել պատկերով ռեժիսոր, չնայած կուզեմայի կինոարտադրող գործընկեր ունենալ: ՄԿ

Այսօր՝ «Նեղափոխություն» (Մեծ Բրիտանիա, 1985), 14:30, «Մոսկվա» կ/թ, Կարմիր դահլիճ

ՀՅՈՒ ՋԱԴՍՈՆ

Օսկարի բազմակի մրցանակակիր դեբյուտային լիամետրաժ ֆիլմը սկիզբ դրեց այս տարվա Խաղարկային մրցույթի ժյուրիի նախագահ Դյու Ջադսոնի կարիերային, որին նվիրված է փառատոնի հետահայաց ծրագիրը: «Յրե անվակաբերը» ֆիլմը պատմում է երկու բրիտանացի մարմնամարզիկների մասին, ովքեր պետք է տարբեր խոչընդոտներ հաղթահարեն՝ Փարիզի 1924 թվականի Օլիմպիական խաղերին մասնակցելու համար: Ֆիլմի փայլուն ընդունելությունն ասես երկու մարզիկների փառահեղ հաղթանակի արտացոլանքն էր, քանի որ 1982-ին այն չորս Օսկար ստացավ, այդ թվում՝ «Լավագույն ֆիլմ» անվանակարգում: Գաղտնի հաջողոր ֆիլմերից «Նեղափոխությունը» թարմ, ոչ հերոսական հայացք էր Ամերիկյան հեղափոխությանը: Կինոարտադրող ստուդիայի կողմից պարտադրված շուսպ թողարկման պատճառով ֆիլմը ներստուգվեց ու ըստ արժանություն գնահատվեց միայն քսան տարի անց, երբ վերադարձվեց այն տեսքով, որով Դադսոնը ի սկզբանե մտադիր էր այն ներկայացնել: Ռեժիսորի վերջին՝ «Ալտամիրա» ֆիլմը պատմում է Իսպանիայում նախապատմական քարանձավային նկարների առաջին հայտնագործման մասին:



HUGH HUDSON

A multiple Oscar-winning feature debut launched the international film career of Hugh Hudson, president of this year's Feature Competition jury, to whom the festival is devoting a small retrospective. His 1981 film *Chariots of Fire* tells the epic story of two British athletes who have to overcome various obstacles to compete in the 1924 Paris Olympics. Their ultimate victory was mirrored by the film's smashing success at the 1982 Academy Awards, where it won four Oscars, among them the Best Picture Award. Hudson went on to make *Greystoke: The Legend of Tarzan, Lord of the Apes* (1984), a revision of the original early twentieth-century novel, and *Revolution* (1985), a refreshingly non-heroic account of the American War of Independence.

A rushed release, urged by the studio, caused the film to flop, and it took twenty years for the film to finally get the recognition it deserved, when it was re-released in the form Hudson originally intended. His latest film is *Finding Altamira*, a story about the first discovery of prehistoric cave paintings in Spain. Hudson is married to producer and actress Maryam d'Abo, who's a member of this year's Armenian Panorama jury.

Your career spans over fifty years now...

